ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի Միքայել Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/2 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի հուլիսի 6-ին կնքված ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/2 պայմանագրում 2018 թվականի օգոստոսի 22-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	Կապալառուի կողմից ներկայացրած գրություն:
Փոփոխության նկարագրություն	Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգվել է մինչև 30 օրացուցային օր:
Փոփոխության հիմնավորում	ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետի 4-րդ ենթակետ, պատասխանատու ստորաբաժանման եզրակացություն և պայմանագրի 8.4 և 8.5 կետեր:

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

06.07.2017թ. կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/2 ծածկագրով գնման պայմանագրի

ք. Երևան 22.08.2018թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Բազալտշին>> ԱԿ-ն (այսուհետ՝ Կապալառու)՝ ի դեմս կոոպերատիվի նախագահ Լ. Մարտիրոսյանի, որը գործում է կոոպերատիվի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով 06.07.2017թ. ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի Միքայել Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի հիմնանորոգման աշխատանքների իրականացման համար Կողմերի միջև կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.4 և 8.5 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին.

1.1.1 2018 թվականի փետրվարի 16-ին կնքված N 1 համաձայնագրի հավելված N 1-ով սահմանված օրացուցային գրաֆիկի.

ա) 3-րդ տողում <<20.09.2018թ.>> բառերը փոխարինել <<19.10.2018թ.>> բառերով,

բ) 4-րդ տողում <<21.09.2018թ.>> բառերը փոխարինել <<20.10.2018թ.>> բառերով, իսկ <<31.10.2018թ.>> բառերը՝ <<29.11.2018թ.>> բառերով:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու՝	**Կապալառու՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Բազալտշին>> ԱԿ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	Գեղարքունիքի մարզ
կառավարական տուն 3	գ. Գեղարքունիք
ՀՀ ֆինանսների նախարարության	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	Վարդանանց մ/ճ
Հ/Հ 900011012573	Հ/Հ 1150000278680100
ՀՎՀՀ 02565827	ՀՎՀՀ 08400345
Գլխավոր քարտուղար՝	Նախագահ՝
---------- Ա. Մկրտչյան	---------- Լ. Մարտիրոսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.